# Բաժին 5
# Գիտական ղեկավարներ

Այս բաժնում մի քանի զտիչի միջոցով կարող եք գտնել գիտական ղեկավարների մասին Ձեզ հետաքրքրող տեղեկությունները: Դրանք են՝

- ✓ կազմակերպություն,
- ✓ անուն,
- ✓ մասնագիտություն:




**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ** Կոնկրետ կազմակերպությունում աշխատող գիտական ղեկավարներին գտնելու համար այս դաշտում գրեք տվյալ կազմակերպության անունը, *օրինակ՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարան,* ապա սեղմեք **ՈՐՈՆԵԼ** կոճակը:



**ԱՆՈՒՆ** Կոնկրետ գիտական ղեկավարի տվյալները գտնելու համար այս դաշտում գրեք վերջինիս անուն-ազգանունը, *օրինակ՝ Արթուր Մինասյան,* ապա սեղմեք **ՈՐՈՆԵԼ** կոճակը:




**ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ** Կոնկրետ մասնագիտություն ունեցող գիտական ղեկավարին գտնելու համար այս դաշտում գրեք մասնագիտության անունը, օրինակ՝ *գեոդեզիա, ներառյալ քարտեզագրություն և կադաստր,* ապա սեղմեք **ՈՐՈՆԵԼ** կոճակը:




## Բաժին 6
## Անվանացանկ

Այս էջում Դուք կարող եք ծանոթանալ Հայաստանի գիտական աստիճանաշնորհման անվանացանկին: Այստեղ նախ կտեսնենք գիտության տարբեր բնագավառները, օրինակ՝ պատմական գիտություններ, քիմիական գիտություններ և այլն, իսկ դրանցից յուրաքանչյուրի մասնագիտություններին ծանոթանալու համար սեղմեք տվյալ գիտության անունը:




Այսպես, եթե ցանկանում եք տեղեկանալ բանասիրական գիտության մասնագիտությունների մասին, սեղմեք այն:




Բացվող դաշտում Դուք կտեսնեք հետևյալ տվյալները՝

- թվանիշ,
- մասնագիտություն,
- աստիճանաշնորհման բնագավառ,
- քննական ծրագիր:




| Թվանիշ | Մասնագիտություն | Աստիճանաշնորհման բնագավառ | Քննական ծրագիր |
|---|---|---|---|
| Ժ.01.01 | Հայ դասական գրականություն | Բանասիրական | Ժ.01.01.pdf |
| Ժ.01.02 | Նորագույն շրջանի հայ գրականություն. Գրականության տեսություն | Բանասիրական | Ժ.01.02.pdf |
| Ժ.01.03 | Ռուս գրականություն | Բանասիրական | Ժ.01.03.pdf |
| Ժ.01.05 | Բանահյուսություն | Բանասիրական | Ժ.01.05.pdf |
| Ժ.01.06 | Ժուռնալիստիկա | Բանասիրական | Ժ.01.06.pdf |
| Ժ.01.07 | Արտասահմանյան գրականություն | Բանասիրական | Ժ.01.07.pdf |
| Ժ.01.09 | Գրադարանագիտություն, մատենագիտություն և արխիվավարություն | Պատմական, Բանասիրական | Ժ.01.09.pdf |
| Ժ.02.01 | Հայոց լեզու | Բանասիրական | Ժ.02.01.pdf |

**ԹՎԱՆԻՇ** Այս դաշտում Դուք տեսնում եք տվյալ մասնագիտության թվանիշը:

**ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ** Այստեղ Դուք տեսնում եք մասնագիտության անունը:

**ԱՍՏԻՃԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ** Այս դաշտում Դուք տեսնում եք աստիճանաշնորհման բնագավառը, որը նույնական է Ձեր ընտրած գիտության ոլորտին:

**ՔՆՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ** Այստեղ Դուք տեսնում եք տվյալ մասնագիտության քննական ծրագիրը:

! Կոնկրետ մասնագիտության մասին ավելի մանրամասն տեղեկանալու համար սեղմեք դրա անունը: Օրինակ, եթե Ձեզ հետաքրքիր է հայ դասական գրականությունը, սեղմեք այն:




Բացվող էջում Դուք կտեսնեք հետևյալ տվյալները՝

- թվանիշ,
- աստիճանաշնորհման բնագավառ,
- քննական ծրագիր,
- հարցաշարեր։




➢ Քննության հարցաշարը դիտելու համար սեղմեք համանուն կոճակը։




# Ուղեցույցներ

Այս բաժնում Դուք կարող եք ծանոթանալ հետազոտողների համար պիտանի բոլոր ուղեցույցներին: Բաժինը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝

- ✓ հայցորդի ուղեցույց,
- ✓ գիտական ղեկավարի համար,
- ✓ խմբագիրների համար,
- ✓ հաճախ տրվող հարցեր:



# Բաժին 1
## Հայցորդի ուղեցույց

Այս էջում Դուք կարող եք ծանոթանալ հայցորդի համար նախատեսված ուղեցույցներին հետևյալ դասակարգմամբ և բովանդակությամբ՝

- ընդունվելու համար,
- ուսման համար,
- պաշտպանելու համար:




**ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ** Այս կոճակը սեղմելով՝ Դուք կտեսնեք ասպիրանտուրայի ընդունելության, հայցորդության ու դոկտորանտուրայի ձևակերպման մասին ուղեցույցը:



**ՈՒՍՄԱՆ ՀԱՄԱՐ** Այս կոճակը սեղմելով՝ Դուք կտեսնեք ուսումնառության համապատասխան գործընթացները նկարագրող ուղեցույցը:




**ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ** Այս կոճակը սեղմելով՝ Դուք կտեսնեք պաշտպանության համապատասխան գործընթացները նկարագրող ուղեցույցը:



# Բաժին 2
## Գիտական ղեկավարի համար

Այս էջում կարող եք ծանոթանալ գիտական ղեկավարների համար նախատեսված ուղեցույցներին:




# Բաժին 3
## Խմբագիրների համար

Այս էջում Դուք կարող եք ծանոթանալ խմբագիրների համար նախատեսված ուղեցույցին:




# Բաժին 4
# Հաճախ տրվող հարցեր

Այս էջում կարող եք կարդալ հաճախ տրվող հարցերը և դրանց պատասխանները:




Պատասխանը կարդալու համար սեղմեք տվյալ հարցը կամ դրա աջ կողքին երևացող սլաքը:




# Օրենքներ և կանոնակարգեր

Այս բաժնում Դուք կարող եք ծանոթանալ ոլորտային հիմնական փաստաթղթերին: Բաժինը համապատասխանաբար բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝

- ✓ օրենքներ և կանոնակարգեր,
- ✓ ԲՈԿ-ի կանոնադրություն,
- ✓ համաձայնագրեր,
- ✓ հրամաններ:



# Բաժին 1
## Օրենքներ և կանոնակարգեր

Այս էջում տեղ են գտել ոլորտային բոլոր օրենքները և կանոնակարգերը:



# Բաժին 2
## ԲՈԿ-ի կանոնադրություն

Այստեղ կարող եք կարդալ ԲՈԿ-ի կանոնադրությունը:




# Բաժին 3
## Համաձայնագրեր

Այստեղ կարող եք ծանոթանալ ոլորտային բոլոր համաձայնագրերին:



# Բաժին 4
## Հրամաններ

Այս էջում կարող եք ծանոթանալ ոլորտային բոլոր հրամաններին:




## Գիտական գործունեություն

❖ Այս բաժինը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝

✓ ***<u>հայ հետազոտողներ,</u>***
✓ ***<u>ամսագրեր,</u>***
✓ ***<u>կազմակերպություններ:</u>***




# Բաժին 1
# Հայ հետազոտողներ

- Այս էջում մի քանի զտիչի միջոցով կարող եք գտնել Ձեզ անհրաժեշտ տեղեկությունները: Դրանք են՝
  - ✓ կազմակերպություն,
  - ✓ անուն,
  - ✓ մասնագիտություն,
  - ✓ համահեղինակներ:




**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ** Կոնկրետ կազմակերպության հետազոտողների ցանկը տեսնելու համար այս դաշտում նշեք Ձեզ հետաքրքրող կազմակերպության անունը, *օրինակ՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարան*, ապա սեղմեք **ՈՐՈՆԵԼ** կոճակը:




- Կոնկրետ կազմակերպությունն ընտրելուց հետո առկայության դեպքում բացվում է նոր՝ <u>**ֆակուլտետ/բաժին**</u> դաշտը, իսկ ֆակուլտետն ընտրելուց հետո էլ՝ <u>**ամբիոն**</u> դաշտը: Ձեր ընտրությունն ավելի հասցեական և արդյունավետ դարձնելու համար կարող եք լրացնել նաև այս վանդակները:







**ՖԱԿՈՒԼՏԵՏ** Կոնկրետ ֆակուլտետի հետազոտողների ցանկը տեսնելու համար այս դաշտում նշեք Ձեզ հետաքրքրող ֆակուլտետի անունը, *օրինակ՝ ագրարային ճարտարագիտության ֆակուլտետ,* ապա սեղմեք **ՈՐՈՆԵԼ** կոճակը:




**ԱՄԲԻՈՆ** Կոնկրետ ֆակուլտետի կոնկրետ ամբիոնի հետազոտողների ցանկը տեսնելու համար այս դաշտում նշեք Ձեզ հետաքրքրող ամբիոնի անունը, *օրինակ՝ ավտոտրակտորների և գյուղատնտեսական մեքենաների ամբիոն,* ապա սեղմեք **ՈՐՈՆԵԼ** կոճակը:




**ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ** Կոնկրետ մասնագիտություն ունեցող հետազոտողների ցանկը տեսնելու համար այս դաշտում նշեք Ձեզ հետաքրքրող մասնագիտության անունը, *օրինակ՝ դիֆերենցիալ հավասարումներ,* ապա սեղմեք **ՈՐՈՆԵԼ** կոճակը:




**ՀԱՄԱՀԵՂԻՆԱԿՆԵՐ** Կոնկրետ հետազոտողի համահեղինակներին տեսնելու համար այս դաշտում նշեք հետազոտողի անունը, *օրինակ՝ Լուսինե Աբելյան*, ապա սեղմեք **ՈՐՈՆԵԼ** կոճակը:




**ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐԻ ԷՋԵՐ** Վերոնշյալ որոնման արդյունքում համակարգը ցույց է տալիս համապատասխան հետազոտողների պրոֆիլները:

Ինչպես տեսնում ենք, առանց վերջիններիս պրոֆիլները մտնելու էլ տեսանելի է որոշակի ինֆորմացիա: Այսպես՝ երևում են ***հետազոտողի նկարը, անուն-ազգանունը, ընթացիկ պաշտոնը, համալսարանը, ֆակուլտետը, ամբիոնը:***




Պրոֆիլի ստորին հատվածում գտնվող պատկերանշանների միջոցով հնարավոր է որոշակի պատկերացում կազմել հետազոտողի հրապարակումների տեսակի ու քանակի մասին:




Այսպես՝ ***հրապարակումներ*** տողում երևացող նշանները ցույց են տալիս հետևյալ հրապարակումների քանակը.

 - հոդվածներ

 - գրքեր

 - գյուտերի արտոնագրեր:

***Ուշադրություն:*** <u>ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ</u> կոճակը սեղմելով՝ Դուք կհայտնվեք ***հրապարակումների ցանկ*** առանձին էջում:




Պրոֆիլի ստորին հատվածում գտնվող պատկերային նշանների միջոցով հնարավոր է տեղեկություններ ստանալ տվյալ հետազոտողի կազմակերպության և ֆակուլտետի հետազոտողների, ինչպես նաև համահեղինակների մասին:




Սեղմելով այս նշանը՝ Դուք կտեսնեք նույն կազմակերպության այլ հետազոտողներին:

Սեղմելով այս նշանը՝ Դուք կտեսնեք նույն ֆակուլտետի այլ հետազոտողներին:

Սեղմելով այս նշանը՝ Դուք կտեսնեք տվյալ հետազոտողի համահեղինակներին:

- Հետազոտողի էջում առկա տեղեկություններին ավելի մանրամասն ծանոթանալու համար սեղմեք նրա նկարը և մտեք նրա պրոֆիլ: Այստեղ Դուք կկարողանաք տեսնել այն բոլոր տվյալները, որ լրացրել է տվյալ հետազոտողը: Այսպես՝

- ընթացիկ պաշտոն,
- ծննդյան ամսաթիվ,
- կոնտակտային տվյալներ,
- հրապարակումների ցանկ,
- հետաքրքրությունների ոլորտ,
- կազմակերպություններ,
- կրթություն և գիտական աստիճաններ,
- աշխատանքային փորձ,
- դասավանդման փորձ,
- այցելություններ,
- մասնակցություն գիտաժողովներին,
- դրամաշնորհներ,
- այլ:

Աստիճանաշնորհում ⌄ Ուղեցույցներ ⌄ Օրենքներ և կանոնակարգեր ⌄ Գիտական գործունեություն ⌄ Հայերեն ⌄

# Հովհաննիսյան Լուսինե Ավետիքի, Գիտությունների թեկնածու



**Ընթացիկ պաշտոնը**
Գիտաշխատող, Երևանի պետական համալսարան, Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ, Դիֆերենցիալ հավասարումների ամբիոն
**Ծննդյան ամսաթիվ:** 16 Ապրիլի, 1988
**Հեռախոսահամար:** +37411111111
**Էլ.փոստ:** hovhannisyan.lusine@yahoo.com
**Հղումներ այլ անձնական էջերին**
**Linkedin:** https://www.linkedin.com/in/lusine-hovh...

**Հրապարակումների ցանկ**

## Հետաքրքրությունների ոլորտ

Մաթեմատիկա

## Կազմակերպություններ

Հետազոտող, Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ), Կիրառական ֆիզիկայի հետազոտությունների բաժին

## Կրթություն և գիտական աստիճաններ

Տարեթվեր: 2005 - 2009
Աստիճան: Բակալավր
Մասնագիտություն: Մաթեմատիկա
Գիտական ղեկավար: Արմեն Հարությունյան
Համալսարան/Ինստիտուտ: Երևանի պետական համալսարան, Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ, Դիֆերենցիալ հավասարումների ամբիոն

Տարեթվեր: 2009 - 2011
Աստիճան: Մագիստրոս
Մասնագիտություն: Մաթեմատիկա
Գիտական ղեկավար: Արմեն Հարությունյան
Համալսարան/Ինստիտուտ: Երևանի պետական համալսարան, Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ, Դիֆերենցիալ հավասարումների ամբիոն

## Աշխատանքային փորձ

Կազմակերպության անվանումը: ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ
Պաշտոնը: Կրտսեր գիտաշխատող
Տարեթվեր: 2011 - 2017

Կազմակերպության անվանումը: Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ
Պաշտոնը: Մասնագետ, տեխնիկական առաջադրանքների մշակման բաժին
Տարեթվեր: 2017 - 2018

## Դասավանդման փորձ

Մաթեմատիկա, Երևանի պետական համալսարան, Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ, Մաթեմատիկական հետազոտությունների կենտրոն — 2013 - 2018

## Այցելություններ

07 հոկ. 2020 - 08 հոկ. 2020 , ԵՊՀ , Իմ այցերը , Իմ այցերի մասին

## Մասնակցություն գիտաժողովներին

25 - 28 ապրիլի 2016, Անվանում, Երևան, Հայաստան

## Դրամաշնորհներ

Հիմնադրամի անվանումը: ՀՀ բյուջե
Տարեթվեր: 2013 - 2015
Ծրագրի անվանումը: ՀՀ և ՌԴ գիտնականների գիտական ակտիվության և գիտական կապերի դինամիկայի ուսումնասիրությունը ըստ հղումների շտեմարանների

Հիմնադրամի անվանումը: EU Tempus
Տարեթվեր: 2014 - 2016
Ծրագրի անվանումը: ARMAZEG: Developing Tools for Lifelong Learning in the Transcaucasus Region: e-Learning

Հիմնադրամի անվանումը: ANSEF
Տարեթվեր: 2017 - 2018
Ծրագրի անվանումը: Data Cleaning as a Challenge to Evaluate Science in Armenia: Practical Solutions

## Այլ

Այլ այլ

***Ուշադրություն:*** Եթե հետազոտողն այդ պահին անցնում է պաշտպանության գործընթացով, ապա նրա պրոֆիլում՝ նկարի տակ, երևում է <u>ԴԻՏԵԼ ԸՆԹԱՑՔԸ</u> կոճակը: Պաշտպանության գործընթացի մանրամասներին ծանոթանալու համար սեղմեք այս կոճակը: Այս էջում դուք կտեսնեք հետևյալ տվյալները՝

- հայցորդ. *նշվում է գիտական աշխատանքի հեղինակի անուն-ազգանունը.*
- գիտական ղեկավար. *նշվում է նրա անուն-ազգանունը.*
- հայցվող գիտական աստիճան. նշվում է համապատասխան տվյալը՝ *գիտությունների թեկնածու կամ գիտությունների դոկտոր.*
- մասնագիտություն. *նշվում է մասնագիտությունը և դրա թվանիշը.*
- կազմակերպություն. *նշվում է տվյալ հաստատության անունը.*
- թեմայի հաստատում. *վերբեռնվում է համապատասխան փաստաթուղթը.*
- պաշտպանության ամսաթիվ. *նշվում է տվյալ օրը.*
- կարգավիճակ. *օրինակ՝ ընթացքի մեջ է.*
- ավարտված. պաշտպանության գործընթացի ավարտված լինելու դեպքում երևում է ☑ նշանը, իսկ չավարտված լինելու դեպքում՝ ☒:



Բացի վերոնշյալից՝ ժամանակագրորեն կտեսնեք հետազոտողի գիտական գործունեության արդյունքները, օրինակ՝ *հոդված, հետազոտություն, դաշտային աշխատանք, ինչպես նաև պաշտպանության գործընթացին առնչվող էական փաստաթղթերը:*

- Հրապարակումների ցանկին մանրամասն ծանոթանալու համար սեղմեք <u>ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ</u> կոճակը: Այս էջում Դուք կարող եք հայտնվել նաև պրոֆիլի տակ գտնվող <u>ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ</u> կոճակը սեղմելով:

***<u>Հրապարակումների ցանկ:</u>*** Այս էջում Դուք կկարողանաք տեսնել հետազոտողի՝ համակարգում գրանցած և տեղադրած բոլոր հրապարակումները, դրանց նկարագրերը, հղումները, ինչպես նաև ներբեռնել դրանք:

Հրապարակումները դասավորված են ըստ տեսակների՝ համապատասխան խորագրերով՝

- հոդված,
- գիրք,
- գրքի գլուխ,
- գիտաժողովի նյութ,
- գյուտի արտոնագիր,
- գրախոսական,
- ատենախոսություն:




- Յուրաքանչյուր հրապարակման վերնագրի տակ հնարավոր է տեսնել ***հեղինակի կամ հեղինակների անունները, ամսագրի համարը, տարեթիվը և տվյալ հրապարակման էջերը, հղումը:***




➢ Յուրաքանչյուր հրապարակման աջ անկյունում կա <u>ՏԵՍՆԵԼ ԱՎԵԼԻՆ</u> անունով կոճակը, որը սեղմելով՝ կարող եք ծանոթանալ դրան վերաբերող որոշ մանրամասների,*օրինակ՝ հղմանը, DOI տվյալին, նկարագրությանը*:




➢ Աջ անկյունում երևացող **PDF** ֆայլի նշանը սեղմելով՝ Դուք կկարողանաք բացել և կարդալ հրապարակումը, ինչպես նաև ներբեռնել այն:




**Հրապարակումների դասակարգում**: Համակարգում առկա 3 զտիչների միջոցով Դուք կարող եք տեսնել հետազոտողի նյութերն ըստ Ձեր նախընտրած դասակարգման:




- ***Ժամանակագրություն:*** Նյութերը ժամանակագրորեն դասավորելու համար սեղմեք <u>ԴԱՍԱԿԱՐԳԵԼ ԸՍՏ ԱՄՍԱԹՎԻ</u> կոճակը:
- ***Հեղինակ:*** Միայն տվյալ հեղինակի նյութերը տեսնելու համար սեղմեք <u>ՑՈՒՅՑ ՏԱԼ ԱՌԱՆՑ ՀԱՄԱՀԵՂԻՆԱԿԻ</u> կոճակը: Այս դեպքում համակարգը ցույց չի տա համահեղինակությամբ նյութերը:
- ***Ժամանակահատված:*** Կոնկրետ ժամանակահատվածի նյութերը տեսնելու համար գրեք Ձեզ հետաքրքրող ժամանակային միջակայքը:

# Բաժին 2
# Ամսագրեր

❖ Այս էջում կարող եք ծանոթանալ գիտական ամսագրերին հետևյալ զտիչների միջոցով՝

- անվանում,
- կազմակերպություն,
- գիտության ոլորտ,
- ԲՈԿ-ի ցանկում:




**ԱՆՎԱՆՈՒՄ** Կոնկրետ ամսագրի մասին տեղեկանալու համար այս դաշտում գրեք դրա անունը, *օրինակ՝ Արևելագիտության հարցեր*, ապա սեղմեք **ՈՐՈՆԵԼ** կոճակը:




ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ Կոնկրետ կազմակերպության ամսագրերին ծանոթանալու համար այս դաշտում նշեք համապատասխան կազմակերպության անունը, ապա սեղմեք ՈՐՈՆԵԼ կոճակը: Այսպես՝ *Երևանի պետական համալսարանի հրատարակած ամսագրերը տեսնելու համար այս դաշտում ընտրեք այն, ապա սեղմեք* ՈՐՈՆԵԼ կոճակը*:*

***Ուշադրություն:*** *Այս դեպքում ևս կազմակերպությունն ընտրելուց հետո ստորաբաժանումների առկայության դեպքում հայտնվում է ֆակուլտետ/բաժին դաշտը՝ համապատասխան տվյալներով: Եթե Ձեր որոնած ամսագիրը վերաբերում է տվյալ հաստատության կոնկրետ բաժնին կամ ֆակուլտետին, ցանկից կատարեք համապատասխան ընտրությունը, ապա սեղմեք* ՈՐՈՆԵԼ կոճակը:



**ՈԼՈՐՏ** Կոնկրետ ոլորտի ամսագրերը տեսնելու համար այս դաշտում նշեք Ձեզ հետաքրքրող ոլորտը, օրինակ՝ *հասարակական գիտություններ կամ բնական գիտություններ*, ապա սեղմեք **ՈՐՈՆԵԼ** կոճակը:




**ԲՈԿ-Ի ՑԱՆԿՈՒՄ** Եթե ցանկանում եք տեսնել ԲՈԿ-ի ցանկում կոնկրետ թվականից գրանցված ամսաթվերի ցանկը, ապա այս դաշտում ընտրեք Ձեզ հետաքրքրող տարեթիվը, *օրինակ՝ 2010:*




- Ամսագրի մասին մանրամասն տեղեկանալու համար սեղմեք **ԱՄՍԱԳՐԻ ԱՆՈՒՆԸ:**




Այստեղ Դուք կտեսնեք հետևյալ տվյալները՝

- նկարագիր,
- հիմնադրման տարի,
- գլխավոր խմբագիր,
- հասցե,
- հեռախոսահամար,
- կազմակերպություն,
- ISSN/eISSN,
- վեբ կայք,
- էթիկական ուղեցույցներ,
- էլեկտրոնային փոստ,
- ԲՈԿ-ում ինդեքսավորված լինելու հանգամանք և տարեթիվ,
- հրատարակման պարբերականություն:



# Բաժին 3
## Կազմակերպություններ

Այս էջում Դուք կարող եք տեսնել գիտական ոլորտի բոլոր կազմակերպությունների անվանումները և դրանց գերատեսչական պատկանելության մասին տեղեկությունը: Օրինակ՝ Ակադեմիկոս Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հողատեխնիկայի ինստիտուտ, գերատեսչությունը՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա:




Համապատասխանաբար Դուք կարող եք կատարել որոնում 2 դաշտի միջոցով՝ *կազմակերպություն* և *գերատեսչություն:*

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ** Այս դաշտում նշեք այն կազմակերպության անունը, որի գերատեսչական պատկանելության մասին ուզում եք տեղեկանալ: Այսպես, եթե Ձեզ հետաքրքրում է Արվեստի ինստիտուտի գերատեսչական պատկանելությունը, առաջին վանդակում գրեք դրա անունը, ապա սեղմեք **ՈՐՈՆԵԼ** կոճակը, որպեսզի տեսնեք արդյունքը:




**ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ** Այս դաշտում նշեք այն գերատեսչության անունը, որի կազմակերպությունների ցանկն ուզում եք տեսնել: Այսպես, եթե Ձեզ հետաքրքրում է, թե ինչ կազմակերպություններ կան ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում, ապա այս դաշտում կատարեք համապատասխան ընտրությունը և սեղմեք **ՈՐՈՆԵԼ** կոճակը:




Դուք կարող եք սեղմել Ձեզ հետաքրքրող կազմակերպության անունը և ավելի մանրամասն տեղեկանալ վերջինիս մասին: Այսպես, եթե Ձեզ հետաքրքրում է Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիան, սեղմեք այն: Բացվող էջում կտեսնեք հետևյալ տվյալները՝

- կրճատ անվանում,
- հիմնադրման տարի,
- հասցե,

- հեռախոս,
- էլեկտրոնային փոստ,
- կայք,
- թույլատրելի թվանիշներ:




***Ուշադրություն:*** Թույլատրելի թվանիշը սեղմելով՝ Դուք կհայտնվեք տվյալ մասնագիտության էջում: Օրինակ, եթե Ձեզ հետաքրքիր է Ա.04.02 թվանիշը, ապա այն սեղմելուց հետո Դուք կհայտնվեք դրա համապատասխան մասնագիտության՝ տեսական ֆիզիկայի էջում:




# Գլխավոր

- ❖ Կայքի գլխավոր էջում Դուք կտեսնեք կայքի բովանդակության մասին ընդհանուր պատկերացում տվող հիմնական տվյալները:

  Դրանք ներկայացված են հետևյալ խորագրերով՝

  - ✓ մոտակա պաշտպանություններ,
  - ✓ նորություններ,
  - ✓ գիտական պարբերական,

- ✓ մասնագիտական խորհուրդ,
- ✓ աստիճանաշնորհմանն առնչված անձինք,
- ✓ կայքի մասին:

**ՄՈՏԱԿԱ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ** Այստեղ Դուք կտեսնեք մոտակա ժամանակահատվածում պաշտպանել պատրաստվող հայցորդներից մի քանիսի պրոֆիլները: Բոլոր մոտակա պաշտպանությունները տեսնելու համար սեղմեք համանուն կոճակը:




**ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** Այստեղ Դուք կծանոթանաք գիտական հարթակի վերջին նորություններին: Կայքի բոլոր նորությունները տեսնելու համար սեղմեք համանուն կոճակը:




**ԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ** Այս մասում Դուք կտեսնեք համակարգում գրանցված պարբերականների թիվը: Միանգամից պարբերականների էջ գնալու և բոլոր ամսագրերը տեսնելու համար սեղմեք համանուն կոճակը:

**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ** Այստեղ Դուք կտեսնեք համակարգում գրանցված մասնագիտական խորհուրդների թիվը: Միանգամից խորհուրդների էջ գնալու և դրանց ցանկին ծանոթանալու համար սեղմեք համանուն կոճակը:

**ԱՍՏԻՃԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ԱՌՆՉՎԱԾ ԱՆՁԻՆՔ** Այս մասում Դուք կտեսնեք ՀՀ աստիճանաշնորհման համակարգին առնչված անձանց թիվը։ Նրանց ամբողջական ցանկը և պրոֆիլները տեսնելու համար սեղմեք համանուն կոճակը:




**ԿԱՅՔԻ ՄԱՍԻՆ** Այս մասում կարող եք կարդալ կայքի ամփոփ նկարագիրը:




# Մեր մասին

Կայքի ներքևի հատվածում կարող եք ծանոթանալ ինչպես գիտական հարթակի մասին տեղեկություններին, վերաբերելի փաստաթղթերին, այնպես էլ բաժանորդագրվել

կայքին, հետևել կայքի էջերին սոցիալական ցանցերում: Ըստ այդմ Դուք տեսնում եք հետևյալ 4 հիմնական բաժինները՝

- բաժանորդագրում,
- հայ հետազոտողներ,
- անհրաժեշտ նյութեր,
- սոցիալական ցանցեր:




**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄ** Պաշտպանության գործընթացի վերջին նորություններին հետևելու համար սեղմեք <u>ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՎԵԼ</u> կոճակը:

➢ Բացվող պատուհանում հայտնվում են հետևյալ դաշտերը՝

**ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏ** Կայքում արդեն գրանցված լինելու դեպքում այս վանդակում հայտնվում է Ձեր էլեկտրոնային փոստի հասցեն: Այլ էլեկտրոնային փոստով բաժանորդագրվելու ցանկության դեպքում ջնջեք այս էլեկտրոնային փոստը և գրեք մյուսը:

**ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ** Այս դաշտում նշեք այն ոլորտները, որոնց վերաբերյալ ցանկանում եք ստանալ ծանուցումներ:

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՎԵԼ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ** Նորությունների մասին ծանուցումներ ստանալու ցանկության դեպքում այս վանդակի դիմաց կատարեք հետևյալ նշումը՝ ☑:




**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՎԵԼ** Բաժանորդագրման գործընթացն ավարտելու համար սեղմեք <u>ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՎԵԼ</u> կոճակը: Դրանից հետո Դուք պետք է կատարեք Ձեր էլեկտրոնային փոստին ուղարկված հրահանգները:




**ՀԱՅ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐ** Այս խորագրի ներքո առկա է 2 բաժին՝

- ✓ մեր մասին,
- ✓ կապ:




**ՄԵՐ ՄԱՍԻՆ** Այստեղ Դուք կարող եք կարդալ Բարձրագույն որակավորման կոմիտեի մասին:




**ԿԱՊ** Այստեղ Դուք կտեսնեք անհրաժեշտ կոնտակտային տվյալները:




**ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ** Այստեղ Դուք կարող եք ծանոթանալ գիտական հարթակին առնչվող կարևոր փաստաթղթերին՝

- ✓ կայքի ուղեցույց,
- ✓ օգտակար հղումներ:




**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ** Սոցիալական ցանցերում մեր էջերին հետևելու համար սեղմեք Ձեզ հետաքրքրող սոցիալական ցանցի անունը՝

- ✓ ՖԵՅՍԲՈՒՔ:

